Embassy of the
Kingdom of the Netherlands

INSTITUTE OF
LIBERAL POLITICS

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

1

Embassy of the
Kingdom of the Netherlands

INSTITUTE OF
LIBERAL POLITICS

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

1

ԵՐԵՎԱՆ 2025

Հեղինակ՝
Տաթևիկ Մատինյան

Խմբագիր՝
Աշոտ Մկրյան

Էջադրող՝
Արուսյակ Օհանյան

Կազմի ձևավորումը՝
Ֆլորա Վարդանյանի

Սույն ձեռնարկում մատչելի լեզվով ներկայացվում է մարդու իրավունքների գաղափարի զարգացումը՝ սկսած հնագույն քաղաքակրթություններում դրված հիմքերից մինչև միջազգային ժամանակակից փաստաթղթերում դրանց ամրագրումը: Քննվում են մարդու իրավունքների տեսական հիմքերը, արժանապատվության և ազատության փիլիսոփայական ընկալումները, ինչպես նաև դրանց արտահայտումը միջազգային իրավունքում և ազգային օրենսդրության մեջ: Ընթերցողը կծանոթանա իրավապաշտպանության գործնական հնարավորություններին, ներպետական և միջազգային մեխանիզմների փոխկապակցվածությանը և մարդու իրավունքների պաշտպանության համաշխարհային կազմակերպությունների գործունեությանը: Նախատեսված է իրավաբանների, իրավապաշտպանների, ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են մարդու իրավունքների տեսությամբ և գործնական կիրառությամբ:

Ձեռնարկը մշակվել է Լիբերալ քաղաքականության ինստիտուտի՝ «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» ծրագրի շրջանակում:
Ծրագիրը ֆինանսավորել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանատունը:

© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի խոսք 5
ՀԱՐՑ 1. Ի՞նչ են մարդու իրավունքները 7
ՀԱՐՑ 2. Որո՞նք են մարդու ազատությունները 10
ՀԱՐՑ 3. Որո՞նք են մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 12
ՀԱՐՑ 4. Որտեղի՞ց են սկիզբ առնում իրավունքներն ու ազատությունները.... 17
ՀԱՐՑ 5. Որո՞նք են մարդու իրավունքների ոլորտում միջազգային հիմնական փաստաթղթերը 18
ՀԱՐՑ 6. Ինչո՞ւ են մարդու իրավունքները համընդհանուր (ունիվերսալ) 22
ՀԱՐՑ 7. Ինչո՞ւ մարդկանց որոշ հատուկ խմբեր ունեն առանձին իրավունքներ 25
ՀԱՐՑ 8. Ո՞վ է իրավապաշտպանը 27
ՀԱՐՑ 9. Իրավապաշտպանների պաշտպանության ի՞նչ արդյունավետ մեխանիզմներ կան 28
ՀԱՐՑ 10. Ինչպե՞ս կարելի է պաշտպանել մարդու իրավունքները 30
ՀԱՐՑ 11. Ի՞նչ է պետք իմանալ ՄԻԵԴ դիմելիս 32
ՀԱՐՑ 12. Ե՞րբ կարելի է դիմել ՄԻԵԴ 34
ՀԱՐՑ 13. Ի՞նչ է ռազմավարական դատավարությունը 36

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Սույն ձեռնարկի նպատակն է որպես օգտակար ուղեցույց ծառայել իրավապաշտպանների նոր սերնդի համար:

Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունն այն կարևորագույն գործառույթներից է, որոնք ուղղակիորեն նպաստում են պետության ժողովրդավարական և իրավական համակարգերի կայացմանը: Իսկ անկախ և գործուն իրավապաշտպան կազմակերպությունները, այսպես կոչված, «հաչող շան» (“watchdog”) դեր են կատարում՝ վերահսկելով, թե որքանով է պետությունը կատարում իր պարտավորությունները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, բարձրաձայնելով առկա խնդիրները և նախաձեռնելով քայլեր՝ ուղղված իրավիճակի բարելավմանը:

Ձեռնարկում ներկայացվում է թե՛ ներպետական, թե՛ միջազգային գործիքակազմը, որը յուրաքանչյուր իրավապաշտպան կարող է կիրառել իր աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար: Բացի այդ՝ տրվում են հստակ բացատրություններ, թե ինչ են մարդու իրավունքները, ինչպես և երբ են տեղի ունենում դրանց խախտումները:

Ի՞ՆՉ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Խոսելով մարդու իրավունքների մասին՝ նախ և առաջ հարկավոր է նկատել, որ դրանք հարաբերություններ են ոչ թե անհատների, այլ անձի և պետության միջև:

Հասարակությունները միշտ էլ մշակել են տարաբնույթ համակարգեր իրենց անդամների սոցիալական համախմբվածությունն ապահովելու համար: Այդ համակարգերը ներառում են իրավունքներ և պարտականություններ սահմանող նորմեր ու կանոններ:

Այնուամենայնիվ, մարդու իրավունքների արդի մոտեցումը միջազգային հանրությունը որդեգրել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. 1948 թ. ընդունվում է **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը**, որը նախատեսված էր կիրառվելու բոլոր պետություններում: Դրանից հետո մարդու իրավունքների ոլորտում ընդունվում են բազմաթիվ այլ փաստաթղթեր, ինչպիսիք են, օրինակ, 1950 թ. **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան** և 1990 թ. **ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոնվենցիան**:

Մարդու իրավունքներն արտացոլում են անձի հիմնական կարիքները՝ սահմանելով այն չափանիշները, առանց որոնց հնարավոր չէ արժանապատվորեն ապրել: Դրանք յուրաքանչյուր անձի իրավունքներն են՝ անկախ ազգությունից, բնակության վայրից, սեռից, էթնիկ պատկանելությունից, մաշկի գույնից, կրոնից, լեզվից կամ որևէ այլ առանձնահատկությունից: Բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ, որոնք բացառում են ամեն տեսակի խտրականություն: Մարդու իրավունքները համընդհանուր են, այսինքն՝ նույնն են բոլոր մարդկանց համար բոլոր երկրներում, անօտարելի են և անբաժանելի, այսինքն՝ անձը դրանք ձեռք է բերում ծնվելու պահից և կամայականորեն չպետք է զրկվի դրանցից: Բոլոր իրավունքները հավասարապես կարևոր և փոխլրացնող են, ինչպես օրինակ՝ անձի ընտրական և խոսքի ազատության իրավունքները:

Մարդու համընդհանուր իրավունքները հաճախ ամրագրվում ու երաշխավորվում են իրավական նորմերով՝ պայմանագրերով, միջազգային սովորութային իրավունքով, իրավունքի ընդհանուր սկզբունքներով ևն: Միջազգային կարգավորումները պետություններին պարտադրում են կատարել մարդու իրավունքների

և հիմնարար ազատությունների պաշտպանության խթանմանն ուղղված գործողություններ:

Այս առումով առանցքային է Մարեկ Նովիցկու այն դիտարկումը, որ մարդու իրավունքների էությունը հասկանալու համար հարկավոր է նախ և առաջ հասկանալ «ժողովրդավարություն» և «սահմանադրականություն» հասկացությունները: Ըստ նրա՝ ժողովրդավարությունը հաճախ նույնականացվում է մեծամասնության իշխանության հետ, ինչի ապացույցը ազատ, արդար ընտրություններն են: Սակայն, ինչպես ցույց է տալիս պատմությունը, մեծամասնության իշխանությունը կարող է շատ դաժան լինել առանձին մարդկանց կամ խմբերի նկատմամբ:

Օրինակ՝ Սոկրատեսի նկատմամբ մահապատիժը կիրառվել է մեծամասնության որոշմամբ, ինչը, մերօրյա չափանիշներով, դժվար թե արդարացի որոշում համարվեր: Մեծամասնությունը հաճախ անտեսում է փոքրամասնությունների խնդիրները. դրանք նույնիսկ թշնամանքի պատճառ են դառնում: Հետևաբար մեծամասնության անսահմանափակ իշխանությունը սպառնալիք է անհատների և խմբերի համար:

Ժողովրդավարությունը մեծամասնության իշխանությունն է, որը սահմանափակված է բոլոր այն իրավունքներով ու ազատություններով, որոնք պատկանում են յուրաքանչյուր անհատի: Մեծամասնությունը իրավունք չունի խախտելու այդ իրավունքներն ու ազատությունները. դրանք սահմանափակում են մեծամասնության կամքը: Սահմանափակ իշխանության սկզբունքը հայտնի է որպես սահմանադրականության սկզբունք և ամրագրված է բազմաթիվ պետությունների սահմանադրությունների այն գլուխներում, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին ու ազատություններին:

Կարևոր է նկատել, որ մարդու իրավունքները ոչ թե խմբային են, այլ անհատական: Դրանց սուբյեկտը մարդն է: Հետևաբար մարդու իրավունքների շրջանակներում չի կարելի խոսել փոքրամասնությունների իրավունքների մասին. դա քաղաքականության լեզու է: Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին անդրադառնալիս խոսվում է ոչ թե մարդկանց՝ որպես խմբի, այլ յուրաքանչյուր հաշմանդամի առանձին իրավունքների մասին:

Այս կանոնից միակ շեղումը ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի առաջին հոդվածն է, որի համաձայն՝ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք»: Ժողովուրդների իրավունքները չեն բխում անհատական իրավունքներից. դրանք տիպիկ խմբային են (հոդվածը միջազգային պակտ են ներառել՝ քաղաքական նկատառումներից ելնելով): Ուստի մարդու իրավունքների մասին խոսելիս մենք նկատի ունենք ոչ թե ժողովրդի, հասարակական դասի կամ դասակարգի, այլ անհատի իրավունքները:

Այսպիսով, մարդու իրավունքներն ու ազատություններն այն կարգավորումներն են, որոնք սահմանափակում են մեծամասնության իշխանությունը: Անձն այդ իրավունքներով ու ազատություններով օժտվում է ծննդյան պահից: Դրանք ժողովրդավարության ու սահմանադրականության հիմքն են և ապահովում են յուրաքանչյուր անհատի պաշտպանությունը մեծամասնության հնարավոր կամայականություններից:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազատությունները երբեմն կոչվում են նաև բացասական (նեգատիվ) իրավունքներ, այսինքն՝ դրանք իշխանության վրա դրված արգելքներն են՝ չմիջամտելու մարդու կյանքի այս կամ այն ոլորտներին: Խոսքի ազատությունը կամ խղճի ազատությունը պետական իշխանության միջամտության արգելքն է մարդու կենսական հարցերին: Այլ կերպ ասած՝ եթե անձն ինչ-որ բանի իրավունք ունի, ապա իշխանությունները պարտավոր են ինչ-որ բան անել այդ իրավունքի ապահովման համար, իսկ եթե անձն ունի որոշակի ազատություն, ապա պետությունը պարտավոր է զերծ մնալ որևէ գործողությունից: Օրինակ՝ խոշտանգումներից ազատությունը նշանակում է, որ անձին ոչ մի պարագայում չի կարելի ենթարկել անմարդկային վերաբերմունքի:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի՝ մարդու հիմնարար ազատություններն են՝

- խոշտանգումների արգելքը,
- ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը,
- մտքի, խղճի և կրոնի ազատությունը,
- արտահայտվելու ազատությունը,
- հավաքների և միավորումների ազատությունը,
- խտրականության արգելքը:

Հետաքրքրական է, որ ՀՀ սահմանադրությունը սրանցից զատ նախատեսում է նաև ազատություններ, որոնք վերցված են միջազգային բազմաթիվ այլ փաստաթղթերից, ինչպես՝

- հաղորդակցության ազատությունն ու գաղտնիությունը,
- անձնական տվյալների պաշտպանությունը,
- ամուսնանալու ազատությունը,
- ստեղծագործության ազատությունը:

Այստեղ ուշագրավ է այն փաստը, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան նախատեսում է «ամուսնության **իրավունք**» (հոդված 12. «Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան»), այնինչ ՀՀ սահմանադրությունը (հոդված 35) նախատե-

սում է «ամուսնանալու **ազատություն**»՝ հետևյալ ձևակերպմամբ. «Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս կինը և տղամարդն ունեն հավասար իրավունքներ: Ամուսնանալու ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ առողջության և բարոյականության պաշտպանության նպատակով»: Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը ներպետական մակարդակում իր գործառույթը համարել է չմիջամտելը՝ ամուսնանալը սահմանելով որպես ազատություն:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Հոդված 1	Մարդու իրավունքները արգելու պարտավորություն	Պետությունները պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր ոք ունենա սույն Կոնվենցիայում նշված իրավունքները:
Հոդված 2	Կյանքի իրավունք	Յուրաքնաչյուր ոք ունի կյանքի իրավունք:
Հոդված 3	Խոշտանգումների արգելք	Անձը չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
Հոդված 4	Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելք	Անձը չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում, պարտադրվի կատարել պարտադիր կամ հարկադիր աշխատանք:
Հոդված 5	Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք	Անձն անհապաղ պետք է տեղեկացվի իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին: Ձերբակալված կամ կալանավորված անձն անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնել դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք:

Հոդված 6	Արդար դատաքննության իրավունք	Անձն ունի անկողմնակալ և անկախ դատավորի արդար դատաքննության իրավունք: Եթե անձը մեղադրվում է հանցագործություն կատարելու համար, անմեղ է, քանի դեռ չի ապացուցվել նրա մեղքը: Անձն իրավունք ունի պետական միջոցների հաշվին ստանալու փաստաբանական օգնություն, եթե չունի բավարար ֆինանսական միջոցներ:
Հոդված 7	Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա	Անձը չի կարող մեղադրվել հանցագործության համար, եթե այն կատարելու պահին այդ գործողության կատարման համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրենսդրություն չի եղել:
Հոդված 8	Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	Անձն ունի անձնական և ընտանեկան կյանքի, տան և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:
Հոդված 9	Մտքի, խղճի և կրոնի ազատություն	Անձն իրավունք ունի դավանելու իր կրոնը տանը և հասարակական վայրերում, ինչպես նաև փոխելու այն:
Հոդված 10	Արտահայտվելու ազատություն	Անձն ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու, տեղեկություն տրամադրելու և ստանալու իրավունք: Այս իրավունքը ներառում է նաև մամուլի ազատությունը:
Հոդված 11	Հավաքների և միավորումների ազատություն	Անձն իրավունք ունի մասնակցելու խաղաղ հավաքների և ստեղծելու միավորումներ կամ անդամակցելու դրանց՝ ներառյալ արհմիությունները:
Հոդված 12	Ամուսնության իրավունք	Անձն ունի ամուսնանալու և ընտանիք ունենալու իրավունք:

Հոդված 13	Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք	Անձը կարող է դիմել դատարան կամ իրավասու այլ մարմինների իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով:
Հոդված 14	Խտրականության արգելք	Յուրաքանչյուր ոք ունի հավասար իրավունքներ՝ անկախ մաշկի գույնից, սեռից, լեզվից, քաղաքական կամ կրոնական համոզմունքներից կամ ծագումից:
Հոդված 15	Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում	Պատերազմի կամ այլ արտակարգ իրավիճակի ժամանակ կառավարությունը կարող է ձեռնարկել գործողություններ, որոնք սահմանափակում են անձի իրավունքները, բայց միայն այն դեպքում, երբ խիստ անհրաժեշտ է:
Հոդված 16	Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում	Կառավարությունները կարող են սահմանափակել օտարերկրացիների քաղաքական գործունեությունը, նույնիսկ եթե դա հակասում է Կոնվենցիայի 10-րդ, 11-րդ կամ 14-րդ հոդվածներին:
Հոդված 17	Իրավունքների չարաշահման արգելք	Սույն Կոնվենցիայով նախատեսված կարգավորումները չի կարելի օգտագործել Կոնվենցիայում ամրագրված իրավունքները և ազատությունները վնասելու համար:
Հոդված 18	Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները	Սույն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների մեծ մասը կարելի է սահմանափակել ներպետական օրենսդրությամբ, սակայն միայն այն դեպքերում, երբ խիստ անհրաժեշտ է:

Հոդված 34	Անհատական գանգատներ	Եթե անձի՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները խախտվել են անդամ պետություններից մեկում, անձը նախ պետք է սպառի ներպետական իրավական պաշտպանության բոլոր մեխանիզմները: Եթե իրավական միջոցներն արդյունավետ չեն, ապա դիմումատուն կարող է ուղղակիորեն դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ):

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի արձանագրություններով նախատեսված մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները

Արձանագրություն թիվ 1-ի

հոդված 1	Սեփականության պաշտպանություն	Անձն ունի սեփականություն ունենալու և իր ունեցվածքն օգտագործելու իրավունք:
հոդված 2	Կրթության իրավունք	Անձն ունի դպրոց հաճախելու իրավունք:
հոդված 3	Ազատ ընտրությունների իրավունք	Անձն ունի կառավարություն ընտրելու իրավունք՝ գաղտնի քվեարկությամբ:

Արձանագրություն թիվ 4-ի

հոդված 2	Տեղաշարժի ազատություն	Եթե անձն օրինական հիմքով գտնվում է որևէ երկրում, ապա իրավունք ունի գնալու այնտեղ, ուր ցանկանում է, և ապրելու այնտեղ, որտեղ ցանկանում է՝ այդ երկրի ներսում:

Արձանագրություն թիվ 6-ի

հոդված 1	Մահապատժի արգելք	Անձը չպիտի դատապարտվի մահվան կամ չպիտի մահապատժի ենթարկվի պետության կողմից:
հոդված 2	Քրեական գործերով բողոքարկման իրավունք	Անձը կարող է իր գործով կայացված դատական ակտերը բողոքարկել վերադաս դատարան:
հոդված 3	Սխալ դատապարտման դիմաց փոխհատուցում	Անձն իրավունք ունի ստանալու փոխհատուցում, եթե դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, սակայն հետագայում պարզվել է, որ անմեղ է:

Արձանագրություն թիվ 12-ի

հոդված 1	Խտրականության ընդհանուր արգելք	Պետական մարմինները չպետք է խտրականության ենթարկեն անձին մաշկի գույնի, սեռի, լեզվի, քաղաքական կամ կրոնական համոզմունքների կամ ծագման հիմքով:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ՍԿԻԶԲ ԱՌՆՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ.թ.ա. 539 թ. Աքեմենյան տերության հիմնադիր Կյուրոս Մեծի բանակը նվաճում է Բաբելոնը: Նա ազատ է արձակում ստրուկներին, հայտարարում կրոնի ազատ ընտրության իրավունքի և ռասայական հավասարության մասին: Կյուրոսի այս և մյուս հրամաններն արձանագրվում են կավե գլանաձև առարկայի վրա, որն այսօր հայտնի է որպես «Կյուրոսի գլան» և համարվում է մարդու իրավունքների վերաբերյալ ամենահին գրավոր փաստաթուղթը: Այն թարգմանվել է ՄԱԿ-ի բոլոր՝ վեց պաշտոնական լեզուներով, և դրա դրույթներն արտացոլված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առաջին չորս հոդվածներում:

Մարդու իրավունքների գաղափարը Բաբելոնից տարածվում է դեպի Հնդկաստան, Հունաստան և Հռոմ: Հռոմում ծագում է «բնական իրավունքի» հայեցակարգը, քանի որ նկատվում է, որ մարդիկ հակված են կյանքում հետևելու որոշ չգրված կանոնների: Ի դեպ, հռոմեական իրավունքը հիմնված էր բնական գաղափարների վրա, որոնք քաղված էին իրերի բնույթից:

Հետագա դարերում, պատմական մի շարք հանգամանքներով պայմանավորված, մշակվում են մարդու իրավունքներն ամրագրող փաստաթղթեր, ինչպիսիք են Ազատությունների մեծ խարտիան (1215), Իրավունքի մասին խնդրագիրը (1628), ԱՄՆ սահմանադրությունը (1787), Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը (1789) և Իրավունքների բիլլը (1791), որոնք դառնում են մարդու իրավունքների վերաբերյալ ժամանակակից բազմաթիվ փաստաթղթերի հիմքը:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Տարաբնույթ պայմանագրեր և միջազգային այլ փաստաթղթեր ծառայում են որպես մարդու իրավունքների և դրա պաշտպանության իրավական աղբյուր: Դրանք լինում են համընդհանուր, որոնց կարող է միանալ յուրաքանչյուր երկիր, և տարածաշրջանային, որոնց գործողությունը սահմանափակված է աշխարհաքաղաքական առումով միմյանց հետ կապված պետությունների որոշակի խմբով: Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերը պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝

ա) հռչակագրեր, որոնք ընդունում են այն մարմինները, որոնք իրենց բնույթով հռչակագրային են (օրինակ՝ ՄԱԿ գլխավոր ասամբլեան), ուստի իրավականորեն պարտադիր ուժ չունեն, թեև, հնարավոր է, քաղաքականապես հեղինակավոր լինեն (այսպես կոչված՝ փափուկ իրավունք) և արտահայտեն ուղենշային սկզբունքներ,

բ) կոնվենցիաներ, որոնք իրավականորեն պարտադիր ուժ ունեցող բազմակողմանի պայմանագրեր են և սովորաբար ներառում են հրահանգող ու շատ կոնկրետ ձևակերպումներ և կնքվում են երկարատև ընթացակարգով (հաճախ պահանջվում է յուրաքանչյուր պետության օրենսդիր մարմնի վավերացումը):

Ավելի լայն տարածում ունեն առաջարկները (recommendations), որոնք նման են կոնվենցիաներին նրանով, որ համաձայնեցվում են բազմակողմանի հիմքի վրա, բայց չեն կարող վավերացվել և ծառայում են ընդհանուր չափանիշներ սահմանելու համար: Նշելի են նաև վարչական ուղեցույցները, որոնք համաձայնեցվում են բազմակողմանի հիմքի վրա, և տրիբունալների կամ այլ հաստատությունների կանոնադրությունները:

Կոնվենցիաների և առաջարկների մեծ մասը, ինչպես նաև որոշ հռչակագրեր ստեղծում են մշտադիտարկման մեխանիզմներ ու մարմիններ դրանց կատարումը վերահսկելու համար: Որոշ դեպքերում այս մարմիններն անդամ պետությունների շրջանում քաղաքական առումով այդքան էլ մեծ հեղինակություն չեն ունենում և անտեսվում են: Այլ դեպքերում մշտադիտարկման մեխանիզմներն ապահովում են քաղաքականապես հեղինակավոր կառույցները, և դրանց որո-

շումները գրեթե միշտ կատարվում են. դրա վառ օրինակն է ՄԻԵԴ-ը, որի որոշումների կատարմանը հետևում է Նախարարների կոմիտեն:

Հռչակագրեր

- Երեխայի իրավունքների հռչակագիր (1924)
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ՄԱԿ, 1948)
- Երեխայի իրավունքների հռչակագիր (1959)
- Հաշմանդամների իրավունքների հռչակագիր (ՄԱԿ, 1975)
- Զարգացման իրավունքի հռչակագիր (ՄԱԿ, 1986/1979)
- Վիեննայի հռչակագիր և Գործողությունների ծրագիր (Մարդու իրավունքների համաշխարհային համաժողով, 1993)
- Պեկինի հռչակագիր և Գործողությունների հարթակ (Կանանց կարգավիճակի չորրորդ համաշխարհային համաժողով, 1995)
- Մարդու պարտականությունների և պատասխանատվության հռչակագիր (ՅՈՒՆԵՍԿՕ, 1998)
- Մշակութային բազմազանության համընդհանուր հռչակագիր (ՅՈՒՆԵՍԿՕ, 2001)
- Բնիկ ժողովուրդների իրավունքների հռչակագիր (ՄԱԿ, 2007)
- Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հռչակագիր (ՄԱԿ, 2008)

Տարածաշրջան՝ Ամերիկա

- Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հռչակագիր (Ամերիկյան պետությունների կազմակերպություն, 1948)
- Բնիկ ժողովուրդների իրավունքների ամերիկյան հռչակագիր (Ամերիկյան պետությունների կազմակերպություն, 2016)

Տարածաշրջան՝ Ասիա

- Մարդու իրավունքների հռչակագիր (Հարավարևելյան Ասիայի պետությունների ընկերակցություն, 2009)

Տարածաշրջան՝ Մերձավոր Արևելք

- Իսլամում մարդու իրավունքների մասին Կահիրեի հռչակագիր (Իսլամական համագործակցության կազմակերպություն, 1990)

Կոնվենցիաներ

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի տվյալներով՝ գոյություն ունեն մարդու իրավունքների միջազգային ինը հիմնական պայմանագիր և մի շարք լրացուցիչ արձանագրություններ:

- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (ICERD, 1965 թ. դեկտեմբերի 21)

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ICCPR, 1966 թ. դեկտեմբերի 16)
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր (ICESCR, 1966 թ. դեկտեմբերի 16)
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW, 1979 թ. դեկտեմբերի 18)
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա (CAT, 1984)
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (CRC, 1989 թ. նոյեմբերի 20)
- Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա (ICMW, 1990 թ. դեկտեմբերի 18)
- Բոլոր անձանց հարկադիր անհետացումներից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա (CPED, 2006 թ. դեկտեմբերի 20)
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (CRPD, 2006 թ. դեկտեմբերի 13)

Տարածաշրջան՝ Աֆրիկա

- Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիա (African Charter on Human and Peoples' Rights, 1981)
- Երեխայի իրավունքների և բարեկեցության աֆրիկյան խարտիա (African Charter on the Rights and Welfare of the Child, 1990)
- Մապուտոյի արձանագրություն (Maputo Protocol, 2003)
- Երիտասարդության աֆրիկյան խարտիա (African Youth Charter, 2006)
- Հաշմանդամության մասին աֆրիկյան արձանագրություն (African Disability Protocol, 2019)

Տարածաշրջան՝ Ամերիկա

- Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիա (American Convention on Human Rights, 1969)
- Խոշտանգումների կանխարգելման և պատժի մասին միջամերիկյան կոնվենցիա (Inter-American Convention to Prevent and Punish Torture, 1985)
- Մարդկանց հարկադիր անհետացումների մասին միջամերիկյան կոնվենցիա (Inter-American Convention on Forced Disappearance of Persons, 1994)
- Կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու, պատժելու և արմատախիլ անելու մասին միջամերիկյան կոնվենցիա (Inter-American Convention on the Prevention, Punishment, and Eradication of Violence against Women, 1994)
- Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջամերիկյան կոնվենցիա (Inter-American

Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Persons with Disabilities, 1999)

Տարածաշրջան՝ Եվրոպա

- Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա (Charter of Fundamental Rights of the European Union, 2000)
- Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիա (Council of Europe Convention on Action against Trafficking in Human Beings, 2005)
- Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիա (European Convention on Nationality, 1997)
- Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (European Charter for Regional or Minority Languages, 1992)
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights, 1950)
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիա European Convention for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment, 1987)
- Եվրոպական սոցիալական խարտիա (European Social Charter, 1961) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա (Revised European Social Charter, 1996)
- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա (Framework Convention for the Protection of National Minorities, 1995)

Տարածաշրջան՝ Մերձավոր Արևելք

- Մարդու իրավունքների արաբական խարտիա (Arab Charter on Human Rights, 2004)

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ (ՈՒՆԻՎԵՐՍԱԼ)

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումը նպաստել է միջազգային չափանիշների հետագա մշակմանն ու վերահսկողության մեխանիզմների ստեղծմանը: Դրա հեղինակները ձգտել են ձևակերպելու մարդու բոլոր բնական իրավունքները: Համընդհանուր հռչակագրի նպատակն է թվարկել այդ իրավունքները և սահմանել նորմեր, որոնք պետք է պահպանեն բոլոր երկրները:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո ՄԱԿ-ը հաստատել է մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթեր: Դրանցից կարևորագույններն են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրերը:

1966 թ. ՄԱԿ գլխավոր ասամբլեան ընդունում է այս երկու դաշնագրերը, որոնք պարունակում են մարդու և քաղաքացու իրավունքների ավելի մանրամասն ցանկ: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը նախատեսում է Մարդու իրավունքների կոմիտեի ստեղծում, որը պատասխանատու է դրույթների պահպանման և իրավունքների կյանքի կոչման համար: Երկու դաշնագրերն էլ ծառայում են որպես մարդու և քաղաքացու իրավունքների միջազգային օրենսգիրք, իսկ մասնակից պետությունները պարտավորվել են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները դրանցում ամրագրված իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար:

Այս դաշնագրերի ընդունումը շրջադարձային է լինում մարդու իրավունքների զարգացման գործում. համաշխարհային հանրությունը մարդու իրավունքները հարգել ու պահպանել խրախուսելուց անցնում է դրանց արդյունավետ պաշտպանությանը: Այսպես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրության համաձայն ստեղծվում է Մարդու իրավունքների կոմիտեն, որը քննարկում է պետությունների զեկույցները, որոնք վերաբերում են փաստաթղթում նշված իրավունքները կյանքի կոչելու համար ձեռնարկված միջոցներին, ինչպես նաև քաղաքացիների բողոքները, որոնք առնչվում են իրենց իրավունքների խախտմանը:

1993 թ. հունիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովում ընդունված Վիեննայի հռչակագրում ամրագրվում է մարդու իրավունքների համընդհանուր բնույթը. «Մարդու բոլոր իրավունքները համընդհանուր են, անբաժանելի, փոխկախյալ և փոխկապակցված: Միջազգային հանրությունը պետք է մարդու իրավունքներին վերաբերվի գլոբալ կերպով, արդար և հավասար հիմունքներով, նույն մոտեցմամբ և ուշադրությամբ: Թեև պետությունները պետք է հաշվի առնեն ազգային, կրոնական, պատմական, մշակութային և կրոնական առանձնահատկությունների նշանակությունը, սակայն, անկախ իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային համակարգերից, պարտավոր են խրախուսել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները»,— նշվում է հռչակագրում: Սա նշանակում է, որ մարդու քաղաքական, քաղաքացիական, մշակութային, տնտեսական և սոցիալական իրավունքները պետք է դիտարկվեն իրենց ամբողջության մեջ: Մարդու իրավունքների համընդհանրությունը երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հավասարությունը՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, բնակության վայրից, կրոնական կամ այլ համոզմունքներից, հասարակական միավորումներին պատկանելությունից և այլ հանգամանքներից: Արգելվում է քաղաքացիների իրավունքների սահմանափակման յուրաքանչյուր ձև՝ հիմնված սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության վրա: Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավունքներ, ազատություններ և հնարավորություններ՝ դրանք իրացնելու:

Բոլոր մարդիկ ունեն ընդհանուր իրավունքներ ու ազատություններ՝ անկախ հասարակական կարգից, քաղաքական ռեժիմից, պետական կառուցվածքի և կառավարման ձևերից, երկրի միջազգային կարգավիճակից, որի քաղաքացին է տվյալ անձը: Մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների, ժողովրդավարության և օրենքի գերակայության հարցերն ունեն միջազգային բնույթ, քանի որ դրանց պահպանումը համաշխարհային կարգի հիմքերից մեկն է:

ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և միջազգային այլ կառույցների շրջանակներում երկրների ստանձնած պարտավորությունները միայն իրենց ներքին գործը չեն: Մարդու իրավունքների համընդհանրությունն այն գաղափարն է, ըստ որի՝ պետությունը պատասխանատու է ոչ միայն սեփական քաղաքացիների, այլև միջազգային հանրության առջև՝ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Ոչ վաղ անցյալում, ելնելով ինքնիշխանության սկզբունքից, համարում էին, որ պետության հարաբերությունները սեփական ժողովրդի հետ ներքին հարցեր են, որոնք կարգավորվում են ազգային մակարդակով: Ժամանակակից աշխարհում պետության ինքնիշխանությունն արդեն վաղուց բացարձակ չէ. այն սահմանափակված է թե՛ դրսից՝ պետությունների փոխկախվածությամբ, միջազգային

իրավունքի նորմերին ենթարկվելով և վերազգային կառույցների առաջացմամբ, թե՛ ներսից՝ անհատի անօտարելի իրավունքներով և պետության՝ քաղաքացու հանդեպ պատասխանատվությամբ:

ՀԱՐՑ 7.

ԻՆՉՈ՞Ւ ՄԱՐԴԿԱՆՑ ՈՐՈՇ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐ ՈՒՆԵՆ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Որոշ խմբերի պաշտպանության համար հարկավոր է սահմանել հատուկ իրավունքներ՝ փոխհատուցելու նրանց նկատմամբ պատմականորեն առկա խտրականությունը, ինչպես նաև ապահովելու հնարավորությունների և ռեսուրսների հավասար հասանելիություն: Այս իրավունքները, որ հաճախ կոչվում են դրական գործողություններ կամ հատուկ միջոցներ, ուղղված են այն խոչընդոտների վերացմանը, որոնք խանգարում են որոշ խմբերի, ինչպիսիք են, օրինակ, կանայք, էթնիկ փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, լիովին իրացնել իրենց ներուժը:

Այդ խմբերը երկար ժամանակ համակարգված կերպով զրկված են եղել իրավունքներից ու հնարավորություններից: Օրինակ՝ ստրկությունը, գաղութատիրությունը և ճնշման այլ ձևեր խոր հետք են թողել սոցիալական ու տնտեսական կառուցվածքի վրա, ինչը հանգեցրել է անհավասարության պահպանմանը: Նույնիսկ այն բանից հետո, երբ խտրականությունը պաշտոնապես արգելվել է, շատ խմբեր շարունակում են բախվել նախապաշարմունքների, կարծրատիպերի, ինչպես նաև բազմաթիվ խոչընդոտների՝ կրթության, զբաղվածության, առողջապահության և այլ կարևոր ռեսուրսների հասանելիության առումով: Այս խոչընդոտները կարող են լինել թե՛ տեսանելի, թե՛ թաքնված:

Բացի այդ՝ մի շարք խմբեր առավել խոցելի են բռնության, շահագործման և խտրականության որոշ տեսակների նկատմամբ: Օրինակ՝ երեխաները, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք կարիք ունենան լրացուցիչ պաշտպանության և աջակցության: Հատուկ գործիքակազմի կիրառումը նպաստում է հավասար հնարավորությունների ապահովմանը մի շարք ոլորտներում. դա ներառում է քվոտաներ, աջակցության ծրագրեր և այլ մեխանիզմներ, որոնք օգնում են հարթելու անհավասարությունը: Սոցիալական արդարությունը պահանջում է, որ բոլոր մարդիկ ունենան հավասար հնարավորություններ՝ իրացնելու իրենց ներուժը: Մարդու հատուկ իրավունքները կարևոր գործիք են այս նպատակին հասնելու համար, հատկապես այն խմբերի համար, որոնք պատմականորեն ճնշվել են կամ զրկվել են իրավունքներից:

Հատուկ իրավունքների օրինակներ.

- կանանց և ազգային փոքրամասնությունների համար քվոտաների նախատեսում ընտրական իրավունքում,
- էթնիկ փոքրամասնությունների մշակութային իրավունքների ապահովում,
- հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ կրթական ծրագրերի նախատեսում,
- հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական վայրերի և ծառայությունների մատչելիությունն ապահովող միջոցառումներ:

Կարևոր է նշել, որ հատուկ իրավունքները չպետք է հանգեցնեն նոր խտրականության կամ այլ խմբերի իրավունքների ոտնահարմանը: Դրանք պետք է ուղղված լինեն բոլորի համար հավասարության և սոցիալական արդարության հաստատմանը:

Ո՞Վ Է ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆԸ

Իրավապաշտպանն այն անձն է, որը զբաղվում է մարդու իրավունքների և ազատությունների խթանմամբ ու պաշտպանությամբ՝ թե՛ ինքնուրույն կերպով, թե՛ հասարակական կազմակերպությունների շրջանակներում: Նա աշխատում է, որ պետությունը և հասարակությունը հարգեն ու պահպանեն մարդու իրավունքները, հանդես գալով նրանց պաշտպանությամբ, որոնց իրավունքները խախտվել են:

Իրավապաշտպանը զբաղվում է տարբեր տեսակի գործունեությամբ՝ ներառյալ մարդու իրավունքների խախտումների մոնիտորինգը և փաստագրումը, տուժողներին իրավական օգնության տրամադրումը, օրենսդրական նախաձեռնությունների մշակումը, խնդիրների լուսաբանումը լրատվամիջոցներում, հանրայնացումը, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Թեև իրավապաշտպանն օգտագործում է մեծ մասամբ իրավական գործիքներ մարդկանց իրավունքները պաշտպանելու համար, նրա գործունեությունը չի սահմանափակվում միայն իրավաբանական օգնություն տրամադրելով: Նա զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ լայն իմաստով՝ հաճախ բախվելով այնպիսի հարցերի, որոնք դուրս են մասնավոր վեճերի շրջանակներից:

Իրավապաշտպանը պետք է ունենա խոր գիտելիքներ իրավունքի, պատմության ու քաղաքագիտության ոլորտներում, լինի սկզբունքային, շփվող և ունենա պատասխանատվության զգացում այլոց հանդեպ: Նրա գործունեությունը մասնավորապես ընդգրկում է ազատությունից զրկված անձանց, անչափահասների, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային կամ սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ու պետության կամ պաշտոնատար անձանց թույլ տված խախտումների դեմ պայքարը:

Այսպիսով, իրավապաշտպանը կարևոր դեր է խաղում ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը և իշխանությունների հաշվետվողականությունը խթանելու, ինչպես նաև մարդու իրավունքների խնդիրների վրա հանրության ուշադրությունը հրավիրելու գործում:

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԿԱՆ

Ամբողջ աշխարհում շատ մասնագետներ իրենց աջակցությունն են հայտնում մարդու իրավունքներին և իրավապաշտպան գործունեություն ծավալում՝ վտանգելով իրենց բարի համբավը, ազատությունն ու կյանքը: Հաճախ իրավապաշտպաններին պիտակում են հանցագործ, օտարերկրյա գործակալ, ահաբեկիչ՝ նրանց համարելով ազգային կամ ավանդական արժեքների սպառնալիք: Նրանցից շատերը տուժում են հենց այն իրավունքների խախտումներից, որոնք պաշտպանում են: Այսօր շատ երկրներում իրավապաշտպաններին լռեցնելու տարբեր մեթոդներ են կիրառվում՝ քրեական հետապնդումներից մինչև ատելության խոսք ու հանրային թիրախավորում:

Այս իրավիճակում, դատական պաշտպանության ավանդական գործիքակազմից զատ, առանձնահատուկ կարևորություն է ստանում հետևյալ երկու ինստիտուտների դերը՝ Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների հանձնակատարի և ՄԱԿ գլխավոր ասամբլեայի՝ իր հիմնական մեխանիզմով՝ Իրավապաշտպանների մասին հռչակագրով:

1999 թ. Եվրոպայի խորհուրդը ստեղծում է մարդու իրավունքների հանձնակատարի պաշտոնը՝ որպես անկախ և անաչառ ոչ դատական ինստիտուտ, որը կոչված է նպաստելու մարդու իրավունքների պաշտպանությանը և իրազեկվածության մակարդակի բարձրացմանը 46 անդամ պետություններում: Հանձնակատարը լիազորված է՝

- խթանել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և աջակցել անդամ պետություններին Եվրոպայի խորհրդի ստանդարտների կիրառման հարցում,
- նպաստել մարդու իրավունքների մասին իրազեկվածությանը անդամ երկրներում,
- բացահայտել մարդու իրավունքներին առնչվող թերությունները օրենսդրության մեջ ու պրակտիկայում,
- աջակցել ազգային օմբուդսմենների և մարդու իրավունքներով զբաղվող այլ կառույցների աշխատանքին,
- խորհրուրդներ ու տեղեկություն տալ տարածաշրջանային մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Հանձնակատարի գործունեությունը կենտրոնանում է երեք փոխկապակցված ուղղությունների վրա՝

- այցեր և երկխոսություն ազգային իշխանությունների ու քաղաքացիական հասարակության հետ,
- թեմատիկ զեկույցների պատրաստում և խորհրդատվություն մարդու իրավունքների համակարգված իրացման վերաբերյալ.
- տեղեկատվություն:

Հետևաբար հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցության հիմնական ձևը իրավապաշտպանների նկատմամբ ոտնձգությունների մասին տեղեկության փոխանցումն է: Թեև հանձնակատարը չունի անհատական գործերով միջամտության լիազորություն, բայց այդ տվյալները հաճախ օգտագործում է իր թեմատիկ զեկույցներում կամ իշխանության ներկայացուցիչների հետ բանակցությունների ժամանակ:

Իրավապաշտպանների համար այսօր առկա նեղ ոլորտային միակ գործիքը 1998 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ գլխավոր ասամբլեայի՝ 53/144 բանաձևով ընդունած Իրավապաշտպանների մասին հռչակագիրն է, որի համաձայն՝ պետությունները պետք է՝

- ճանաչեն իրավապաշտպանների կարևոր դերը և ներդրումը խաղաղության ապահովման, կայուն զարգացման և մարդու իրավունքների պաշտպանության գործում,
- հարգեն իրավապաշտպաններին՝ չենթարկելով խտրականության, պաշտպանեն բոլոր կամայական գործողություններից, ապահովեն արդյունավետ իրավական պաշտպանության հասանելիություն խախտումների դեպքում և երաշխավորեն ենթադրյալ խախտումների օպերատիվ ու անաչառ քննությունը,
- խթանեն իրավապաշտպան գործունեությունը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ և նպաստելով հասարակության իրազեկմանը մարդու իրավունքների վերաբերյալ:

Հռչակագիրը պետություններին խրախուսում է ընդունել ներպետական օրենսդրություն իրավապաշտպանների պաշտպանության համար: Օրինակ՝ International Service for Human Rights կազմակերպությունը, որ զբաղվում է իրավապաշտպանների հիմնահարցերով, մշակել է նման օրինագծի տիպային տարբերակ: Իրավապաշտպան համայնքների գործունեության առաջնային ուղղություններից մեկը պետք է լինի այդպիսի օրենսդրության ընդունումը նպատակային և համակարգված աշխատանքի միջոցով:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Նախ և առաջ հարկ է նկատել, որ աշխարհում չկա որևէ երկիր, որտեղ չեն խախտվում մարդու իրավունքները: Սակայն կարևոր է, որ պետությունները գործարկեն մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ՝ չմիջամտելով դրանց ազատ իրացման գործընթացին, իսկ խախտումների դեպքում էլ ունենան պարտավորություն՝ ապահովելու դրանց արդյունավետ քննությունն ու խախտված իրավունքների վերականգնումը:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ մարդու իրավունքները խախտում են բացառապես պետությունները, պետական մարմինները, մասնավորապես պաշտոնատար անձինք: Հետևաբար պետությունը մարդու իրավունքների պաշտպանության գլխավոր երաշխավորն է:

Խախտված իրավունքները կարելի է պաշտպանել իրավական գործիքակազմի կիրառմամբ, մասնավորապես դիմելով ներպետական դատական համակարգին, Սահմանադրական դատարան, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին կամ ներգրավելով քաղաքացիական հասարակությանը հանրային իրազեկման արշավների, փորձագիտական վերլուծությունների, հանրային ճնշման և այլ մեխանիզմների միջոցով:

Դատարանները մասնավորապես կոչված են դիտարկելու այն գործերը, որոնց շրջանակում որոշվում է՝ արդյոք պետական մարմինների գործողությունները համապատասխանում են մարդու իրավունքների պաշտպանության պահանջներին: Սահմանադրական դատարանը գնահատում է, թե արդյոք որևէ օրենք կամ նորմատիվ ակտ խախտում է մարդու իրավունքները: Իսկ մարդու իրավունքների պաշտպանը վերահսկում է մարդու իրավունքներին առնչվող իրավիճակը և հանդես գալիս համապատասխան արձագանքներով:

Պայմանավորված այն հանգամանքով, որ մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերը որոշ դեպքերում բավարար չեն, ստեղծվել են նաև միջազգային կառույցներ, որոնք վերահսկում են մարդու իրավունքների ոլորտում պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը: Այդ կառույց-

ներից են միջազգային դատարանները (օրինակ՝ ՄԻԵԴ-ը) կամ վերահսկող հաստատությունները (օրինակ՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն):

Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվում են նաև ազգային և միջազգային հասարակական կազմակերպությունները (օրինակ՝ Human Rights Watch-ը): Դրանք մեծ մասամբ շահույթ չհետապնդող կազմակերպություններ են, որոնց գործունեությունն ուղղված է տարբեր մակարդակներում որոշակի իրավունքների խախտումների արձանագրմանն ու դրանց դեմ պայքարին: Այդ կազմակերպություններն իրավական օգնություն են ցուցաբերում մարդու իրավունքների խախտումների զոհերին և հանրության իրազեկման արշավներ են անցկացնում: Ամբողջ աշխարհում բազմաթիվ հասարակական կազմակերպություններ վճռորոշ նշանակություն են ունեցել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու գործում:

ՀԱՐՑ 11.

Ի՞ՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ ՄԻԵԴ ԴԻՄԵԼԻՍ

ՄԻԵԴ-ը (ստորև՝ նաև Դատարան) սեփական նախաձեռնությամբ չի կարող գործերի քննություն նախաձեռնել: Այն իրավասու է քննելու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ստորև նաև՝ Կոնվենցիա) խախտումների մասին բողոքները և այն էլ անհատական կամ միջպետական գանգատների հիման վրա:

Կոնվենցիան տարբերակում է գանգատի երկու տեսակ՝ անհատական, որը ներկայացնում է անձը, անձանց խումբը, առևտրային կամ ոչ կառավարական կազմակերպությունը, և միջպետական, որը ներկայացնում է պետությունն այլ պետության դեմ:

Դատարանի հիմնադրման օրվանից գրեթե բոլոր գանգատները ներկայացրել են ֆիզիկական անձինք, որոնք իրենց գործերն ուղղակիորեն բերել են Դատարան Կոնվենցիայով ամրագրված մեկ կամ մի քանի իրավունքի խախտման գանգատներով:

Դատարանին կարող են ներկայացվել գործեր միայն այն պետությունների դեմ, որոնք վավերացրել են Կոնվենցիան: Այսինքն՝ Կոնվենցիան չվավերացրած երկրների կամ մասնավոր անձանց դեմ ներկայացված դիմումները համարվում են անընդունելի:

Ֆիզիկական անձինք կարող են անձնապես բողոքներ ներկայացնել. դատավարական գործընթացի սկզբնական փուլում փաստաբանական աջակցությունը պարտադիր չէ: Բավարար է Դատարան ուղարկել պատշաճ կերպով լրացված գանգատ՝ անհրաժեշտ փաստաթղթերի կցմամբ: Սակայն պետք է հաշվի առնել, որ գանգատի գրանցումը երաշխիք չէ, որ այն ընդունելի կճանաչվի կամ ըստ էության քննելու արդյունքում կբավարավի:

Կոնվենցիայի համակարգը նախատեսում է Դատարան դիմելու «առավելագույն» մատչելիություն, որը յուրաքանչյուր անձի հնարավորություն է տալիս է գործ նախաձեռնելու, եթե նույնիսկ չունի միջոցներ կամ ապրում է անդամ պետության հեռավոր շրջաններում: Այս առումով դատարանում գործը քննելու համար վճարներ նախատեսված չեն:

Դատարան ներկայացվող գանգատների մեծ մասն անհատական է: Սակայն պետությունը նույնպես կարող է դիմել Դատարան՝ Կոնվենցիան վավերացրած մեկ այլ պետության դեմ գանգատ ներկայացնելով. դա կոչվում է միջպետական դիմում:

Իրավական ներկայացուցչությունը պարտադիր չէ դատավարական գործընթացի սկզբում: Իրաaվաբանական օգնությունն անհրաժեշտ է դառնում, երբ Դատարանը գործի վերաբերյալ իր դիտարկումների մասին ծանուցում է պատասխանող կառավարությանը: Անհրաժեշտության դեպքում դատավարության այդ փուլում դիմումատուներին տրմադրվում է իրավաբանական օգնություն:

Դատարանում գործերի քննությունն ունի երկու հիմնական փուլ՝ ընդունելիության և ըստ էության քննության (այսինքն՝ բողոքների քննության): Բացի այդ՝ գանգատների ուսումնասիրությունն անցնում է մի շարք այլ փուլերով: Եթե գանգատն ակնհայտորեն անընդունելի է, մերժվում է մեկ դատավորի կազմով, ինչը վերջնական որոշում է և ենթակա չէ բողոքարկման: Կոմիտեն կայացնում է վերջնական որոշում կամ վճիռ՝ Դատարանի՝ կայուն կերպով ձևավորված նախադեպային իրավունքի հիման վրա: Պալատը գործի վերաբերյալ իր դիտարկումների մասին ծանուցում է պատասխանող կառավարությանը: Երկու կողմերը ներկայացնում են իրենց գրավոր դիտարկումները: Դատարանն այնուհետև որոշում է՝ արդյոք անհրաժեշտ են հրապարակային լսումներ: Դրանք անցկացվում են բացառիկ դեպքերում. հաշվի է առնվում Դատարանի քննած գործերի քանակը:

Պալատը եզրափակիչ փուլում կայացնում է վճիռ, որը վերջնական է դառնում եռամսյա ժամկետի ավարտին: Այդ ընթացքում դիմումատուն կամ կառավարությունը կարող է դիմել՝ գործը Մեծ պալատի քննարկմանը փոխանցելու համար: Եթե փոխանցման դիմումը Մեծ պալատի մի խումբ դատավորներ ընդունում են, Մեծ պալատը վերանայում է գործը, և անհրաժեշտության դեպքում ընթանում են հրապարակային լսումներ: Մեծ պալատի վճիռները վերջնական են:

Ե՞ՐԲ ԿԱՐԵԼԻ Է ԴԻՄԵԼ ՄԻԵԴ

ՄԻԵԴ-ի կողմից ընդունելի համարվելու համար գանգատը պետք է բավարարի որոշակի պահանջներ: Հակառակ դեպքում բողոքը նույնիսկ չի քննվում:

Առաջին և հիմնական պայմանն այն է, որ գործը պետք է ներկայացվի Դատարանին միայն այն բանից հետո, երբ սպառված են ներպետական իրավական պաշտպանության բոլոր արդյունավետ միջոցները: Այսինքն՝ դիմող անձը պետք է նախ գործը ներկայացնի իր երկրի դատական ատյաններին՝ հասնելով հնարավոր ամենաբարձր ատյանին: Այսկերպ պետությանը հնարավորություն է ընձեռվում՝ ազգային մակարդակում վերացնելու ենթադրյալ խախտումը:

Բացի այդ՝ ՄԻԵԴ-ի դիմումատուի բողոքը պետք է վերաբերի միմիայն Կոնվենցիայով սահմանված մեկ կամ մի քանի իրավունքի: Դատարանը չի կարող քննել որևէ այլ իրավունքի խախտման վերաբերյալ բողոք: Գանգատը Դատարանին պետք է ներկայացվի գործի վերաբերյալ վերջին դատական որոշումից հետո՝ չորս ամսվա ընթացքում: Այդ որոշումը սովորաբար լինում է տվյալ պետության բարձրագույն դատական ատյանի վճիռը: Դիմումատուն պետք է անձամբ և ուղղակիորեն տուժած լինի Կոնվենցիայի խախտման հետևանքով, և հենց իրեն պետք է պատճառված լինի վնասը: Բացի այդ՝ գանգատը պետք է ուղղված լինի միայն Կոնվենցիայի անդամ պետության կամ պետությունների դեմ: Դատարանը չի քննում բողոքներ, որոնք ուղղված են այլ պետությունների կամ մասնավոր անձանց դեմ:

Այսպիսով, ՄԻԵԴ կարելի է դիմել, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ պայմանները.

ա) խախտվել է/են անձի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքներից մեկը/մի քանիսը,
բ) սպառվել են ներպետական արդյունավետ պաշտպանության բոլոր միջոցները,
գ) ներպետական դատական ատյանի վերջնական որոշման կայացման պահից չի անցել չորս ամիս:

Նշված կանոններն ունեն որոշ բացառություններ այն դեպքերի համար, երբ իսպառ բացակայում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցը: Օրինակ՝ «Բադալյանն ընդդեմ Հայաստանի» գործով՝ Դատարանն ընդունել է գանգատը՝ հակառակ այն հանգամանքին, որ դիմումատուն չէր դիմել Ադրբեջանի դատական ատյաններ: Բադալյանի ներկայացուցիչները Դատարանին ներկայացրել էին բավարար ապացույցներ առ այն, որ Հայաստանը և Ադրբեջանը չունեն դիվանագիտական հարաբերություններ և փոստային կապ: Այդ պայմաններում անձը, գտնվելով Հայաստանում, ֆիզիկապես չէր կարող օգտվել Ադրբեջանի դատական համակարգից: Այս հանգամանքի հիման վրա ՄԻԵԴ-ը տվյալ դիմումն ընդունել է:

ՀԱՐՑ 13.

Ի՞ՆՉ Է ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմավարական դատավարությունն ավելին է, քան պարզապես իրավական հարցերի վիճարկումը դատական կարգով: Այն անցկացվում է՝ հասարակության շրջանում համակարգային փոփոխություններ բերելու կամ խնդրահարույց իրավիճակների վրա հանրության ուշադրությունը հրավիրելու համար:

Ռազմավարական դատավարությունը ներառում է դատական գործընթացի պլանավորում, ներկայացվող գործի կամ զոհի ընտրություն և դատավարության նախաձեռնում: Դրա նպատակն է՝ իրավական լուծումը կամ օրենքի մեկնաբանությունը կիրառել առավել երկարաժամկետ արդյունքի հասնելու, այլ ոչ թե պարզապես տվյալ գործի շրջանակում հաղթանակ արձանագրելու համար: Հետևաբար ռազմավարական դատավարությունը միտված է հասնելու արդյունքների, որոնք ազդում են հասարակության լայն շերտերի և պետական կառավարման մարմինների վրա՝ չկարևորելով դատական նախադեպերի վերջնարդյունքը:

Դատական գործընթացների միջոցով և սոցիալական արդարության հասնելու համար իրավապաշտպանները դատարաններն օգտագործում են օրենսդրական ու հասարակական փոփոխությունների հասնելու համար: Հաճախ նման գործընթացները ջատագովության արշավների (advocacy campaign) մաս են կազմում, որոնք նպատակ ունեն բարձրացնելու որոշակի հարցերի վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը կամ պայքարելու բնակչության սոցիալապես անապահով շերտերի իրավունքների համար: Շատ խմբեր կամ անհատներ, որոնք նախաձեռնում են ռազմավարական դատավարություններ, ներգրավում են համախոհների՝ հանրային պահանջարկ ձևավորելու կամ կառավարությանն օրենսդրական փոփոխությունների մղելու նպատակով:

Ռազմավարական դատավարություն պլանավորելիս կարևոր է հաշվի առնել, թե ինչ մակարդակում պետք է անցկացվի՝ ազգային, թե միջազգային: Օրինակ՝ ՄԻԵԴ-ը վճիռներ է կայացնում այն պետությունների դեմ, որոնք խախտում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, և այդ վճիռները ներառում են առաջարկներ պետություններին՝ ձեռնարկելու գործողություններ խախտումները վերացնելու համար: Առաջարկվում են անհատական միջոցներ կոնկրետ գործին անդրադառնալու համար, օրինակ՝ փոխհատուցում կամ դիմողի կարգավիճակի փոփոխու-

թյուն, և ընդհանուր միջոցներ՝ ապագայում նմանատիպ խախտումները կանխելու համար: Ընդհանուր միջոցներ են.

ա) օրենսդրական փոփոխությունների կատարումը և ներպետական օրենսդրության համապատասխանեցումը Կոնվենցիային,
բ) ընթացակարգերի բարելավումը, նոր ընթացակարգերի կամ երաշխիքների ներդրումը ապագա խախտումները կանխելու համար,
գ) դատավորների, փաստաբանների և այլ պաշտոնյաների վերապատրաստումը,
դ) համակարգային խնդիրների լուծումը՝ բացահայտված խախտումների հիմնական պատճառների վերացումը:

Հաջող կիրառման դեպքում ռազմավարական դատավարությունը շոշափելի արդյունքներ է բերում, ինչը կարևոր է ոչ միայն այն անձի համար, որի գործը ներկայացվել է դատարանին, այլև անհատների խմբի, որոնք հայտնվել են նմանատիպ իրավիճակում: Օրինակ՝ հնարավոր է ստիպել իշխանությանը ձեռնարկելու գործողություններ, որոնք ուղղված են՝ քաղաքացիներին առաջնային ծառայություններ մատուցելուն, առանձին խմբերի համար հավասարություն երաշխավորելուն կամ շրջակա միջավայրի համար վտանգավոր գործողությունները կանխելուն:

Այնուամենայնիվ, անհնար է բանաձևել, թե որ դեպքում է ռազմավարական դատավարության անցկացումը հաջողված, քանի որ յուրաքանչյուր գործ պետք է համապատասխանի իր առջև դրած խնդիրներին: Գաղտնիք չէ, որ ռազմավարական դատավարություն կարելի է նախաձեռնել՝ հստակորեն գիտակցելով, որ տվյալ գործով անհնար է հասնել բարենպաստ դատական ակտի: Այս պարագայում նպատակ է դրվում ի ցույց դնելու այն իրավական խոչընդոտներն ու բացերը, որոնք տվյալ հարցի դատավարական լուծումն անհնարին են դարձնում երկրում:

Այսպիսով, ռազմավարական դատավարությունը հատուկ ընտրված գործի վարումն է, որը միտված է մարդու իրավունքների ոլորտում համակարգային բարեփոխումներին: Այն կենտրոնանում է անհատական գործի վրա՝ նպատակ ունենալով առաջ բերելու լայնածավալ փոփոխություններ: Այս գործերը կարևոր իրավական նախադեպեր են ստեղծում՝ հրապարակայնորեն բացահայտելով անարդարությունները, բարձրացնելով հանրության իրազեկվածության մակարդակը և նպաստելով փոփոխությունների՝ օրենսդրության, քաղաքականության մեջ և պրակտիկայում: Ռազմավարական դատավարությունը երկարատև ազդեցություն է ունենում բազմաթիվ մարդկանց վրա ազգային, տարածաշրջանային կամ միջազգային մակարդակներում:

Ձեռնարկը հրատարակվել է՝ Լիբերալ քաղաքականության ինստիտուտի կողմից Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ:

«Մարդու իրավունքների ոլորտում ամենակարևորը, որ կարելի է անել, կրթել մարդկանց իրենց իրավունքների մասին»,— Կոֆի Անան, ՄԱԿ-ի 7-րդ գլխավոր քարտուղար, Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիր (2001)

Embassy of the
Kingdom of the Netherlands

INSTITUTE OF
LIBERAL POLITICS

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

1

ՆՇՈՒՄՆԵՐ